«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝* Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

*Առարկան՝* *Դասվար*

*Հետազոտող ուսուցիչ՝* Սիրանուշ Ջանիբեկյան

*Ուսումնական հաստատություն՝* ԼԽՈՒԵ հատուկ կրթահամալիր

*Երևան 2022*

Հարց՝ Ի՞նչ ազդեցությունը ունի լսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման գործընթացում ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...……4

ՈՒՍՈՒՑԻՉ–ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ…….6

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ և դրանց ազդեցությունը լսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման գործընթացում……..…17

Եզրակացություն……21

Օգտագործված գրականության ցանկ……..……22

# Ներածություն

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար կրթությունը արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Լսողության խանգարում ունեցող երեխայի դաստիարակության մեջ ընտանիքի դերը ավելի կարևոր է, քան լսող երեխայի դաստիարակման մեջ: Եվ, լսողների հասարակության մեջ լսողության խանգարում ունեցող երեխաների ներառման նկարագրված մոտեցման իրականացումը տալիս է դրական արդյունք, սակայն միայն այն դեպքում, երբ ծնողները դառնում են մասնագետի, մանկավարժի համախոհներ: Ճանապարհի ընտրության մեջ վերջին խոսքը միշտ մնում է ծնողներին: Մանկավարժների և ծնողների փոխըմբռնումից, զարգացնող և վերականգնող աշխատանքի անցկացման մեջ միասնական և ակտիվ մասնակցությունից է կախված երեխայի հասարակության մեջ ներառվելը, սոցիալականացման դրական արդյունքը: Այս ամենից ելնելով՝ պարզ է դառնում, թե որքան կարևոր է ծնողի իրազեկվածությունը լսողության խանգարում ունեցող երեխայի զարգացման մեջ: Որքան իրազեկ է ծնողը իր երեխայի խնդրի վերաբերյալ, այդքան էլ արդյունավետ կլինի լսողության խանգարում ունեցող երեխայի զարգացումը և սոցիալականացումը (Леонгард, Э.И., Самсонова, Е.Г., 1991; Выготский, 1996):

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել լսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման գործընթացում ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:

Նպատակն իրականացնելու համար առաջադրված խնդիրներն են՝

- Ուսումնասիրել ընտանեկան միջավայրի դերը երեխայի ուսուցման և զարգացման գործընթացում,
- Ուսումնասիրել և ուսուցիչ-ծնող համագործակցության արդյունավետ ուղիներն և նրանց ազդեցությունը դպրոցականի զարգացման գործում
- Ուսումնասիրել լսողության խանգարում ունեցող երեխաների զարգացման գործընթացում ուսուցիչ-ծնող համագործակցության դերը

## ՈՒՍՈՒՑԻՉ–ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Դպրոցականի դաստիարակությունն ու կրթությունը սկսվում է իր ապրած միջավայրի սոցիալական փորձի,ընդունված վարքագծի կանոնների, փոխհարաբերությունների, հասարակության մասին պարզագույն գիտելիքների, բարոյական արժեքների, կյանքի մասին նախնական հայացքների յուրացմամբ, որոնց շնորհիվ նա օրըստօրե բացահայտում է իրեն ու իր շրջապատը, սկսում է գիտակցել իր պատկանելիությունն ընտանիքին,դպրոցին,քաղաքին ու հայրենիքին:Հենց այդ միջավայրն է,որ երեխային ստիպում է դրսևորել արժանավայել պահվածք, հարգի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունը,լինի մարդասեր, հանդուրժող,դրսևորի աշխատասիրություն,հնարամտություն, նպատակադրվածություն և գնահատի սեփական և այլոց աշխատանքը:Սակայն նշված որակները ժամանակակից դպրոցականի մեջ ձևավորելը հնարավոր է միայն դպրոցի և ընտանիքի փոխհամաձայնեցված գործելակերպի ու արդյունավետ համագործակցության պարագայում,երբ առկա է փոխադարձ հարգանքի, աջակցության,միմյանց նկատմամբ վստահության,համբերատարության ու հանդուրժողականության մթնոլորտ:Հայտնի է,որ դպրոցականի սոցիալականացումն առավելապես իրականանում է երկու հաստատություններում՝ընտանիքում և դպրոցում:Ընտանիքն է երեխային փոխանցում իր ազգի սոցիալ-պատմական փորձը, բարոյական արժեքները,ավանդույթներն ու սովորույթները,իր ամենօրյա գործելակերպով,դատողություններով սովորեցնում շրջապատի նկատմամբ լինել բարյացկամ,գթասիրտ,վարժեցնում է հասարակության մեջ ընդունված կանոններին:

Չնայած այդ ամենին,ընտանեկան դաստիարակությունը կրում է տարերային բնույթ, ի տարբերություն դպրոցի,ուր դաստիարակությունը մանկավարժորեն նպատակաուղղված է,ընթանում է տարեկիցների և ուսուցիչների մասնակցությամբ:

Այնուամենայնիվ ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքներում և՛ դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Ոչ՛ ծնողները, ոչ՛ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները,հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝հասարակության մեջ պատշաճ կերպով ինտեգրվելու համար: Ընտանիքն ու դպրոցը երկուստեք հաճախ սկսում են կորցնել կողմնորոշումը՝ կանգնելով այնպիսի բարդ խնդիրների առաջ, ինչպիսիք են՝գերտեղեկատվությունը և զանգվածային լրատվության միջոցների կողմից առաջարկվող այլընտրանքային մոդելները: Այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների,ծնողների ու դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը:

Դպրոց-ընտանիք ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Դպրոց-ընտանիք համագործակցությունը ժամանակակից դպրոցում բնորոշվում է նաև մեկ այլ օբյեկտիվ պահանջներով ու անհրաժեշտությամբ:

Այն ենթադրում է .

1. ողջ հասարակության կրթադաստիարակչական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
2. ընտանիքի կրթական մայարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ, ընտանիքում դաստիարակչական աշխատանքների ու ձևերի շտկում,
3. սովորողի ուսման,դաստիարակության հարցերում ընտանիքի,դպրոցի, հասարակության պատասխանատվության բարձրացում,

   Այսպիսով՝ դպրոց-ընտանիք համագործակցությունը մի գործընթաց է,որը չի ավարտվում ուսումնառության այս կամ այն տարում,այլ շարունակական է և ներգրավված կրթադաստիարակչական ամբողջական գործընթացի մեջ,և նրա ապահովումը՝ժամանակակից պայմաններում դպրոցի,ընտանիքի,հասարակության զարգացման տեսանկյունից ,կարևորագույն նպատակ է համարվում:

Դպրոցում ուսումնադաստիարակչական ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում, ինչպիսի՞ գործնական հմտություններով է առաջին անգամ եկել դպրոցական կոլոկտիվ, ինչու՞մն է կայանում

երեխային շրջապատող մարդկանց դաստիարակչական ներգործությունների թույլ և ուժեղ կողմերը, համաձայնեցվում է արդյո՞ք ընտանեկան դաստիարակությունը դպրոցում տարվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ և նմանատիպ այլ հարցեր: Տարրական դպրոցի ուսուցչի և ծնողների հետ համագործակցությունը կարևոր նախադրյալ և մանկավարժական պայման է՝ ապահովելու համար երեխաների համակողմանի դաստիարակությունը և իրականացնելու դպրոցի կրթական նպատակները: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունն արդիական է, քանի որ երեխայի բազմակողմանի դաստիարակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով,որի հիմքում պետք է լինեն՝ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության և հանդուրժողականության սկզբունքները: Ընտանիք-դպրոց համագործակցության նպատակը երեխայի՝ինքնորոշման, ինքնակառավարման, առօրյա կյանքի խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումն է: Պարզ է, որ այս խնդիրների լուծումը պահանջում է կոլեկտիվ ջանքեր, որոնք ցանկալի արդյունք կտան այն ժամանակ, երբ ընտանիքն իմանա, թե ինչ է անում դպրոցը, իսկ դպրոցն իմանա, թե ինչ պայմաններում և ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում:

Այդ է պատճառը, որ կրտսեր դպրոցի ուսուցիչները մշտական կապ են պահպանում ընտանիքների հետ: Նրանք երեխաների դաստիարակության մեջ հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողնորի հետ, մշակում համատեղ ծրագրեր և գտնում դրանց իրականացման արդյունավետ եղանակներ:

Քննարկենք դպրոցականների ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերը՝

1. Համադպրոցական,դասարանական ծնողական ժողովները
2. Դպրոցականի տուն կատարվող այցերը
3. Աշխատանքը ծնողական ակտիվի հետ
4. Ծնողների մանկավարժական լուսավորությունը և այլն:

Դասարանական ծնողական ժողովներ: Ծնողական ժողովների կազմակերպումը դպրոց-

ընտանիք համագործակցության ամենատարածված ձևն է:Ծնողական ժողովներն անց են կացվում ուսումնական տարվա սկզբին և ուսումնական քառորդի վերջին՝դասարանում ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի և խնդիրների հետ ծնողներին ծանոթացնելու նպատակով:Այդ ժողովներում քննարկվում են դպրոցում և ընտանիքում երեխաների դաստիարակման կարևոր հարցերը:Հարկավոր է,որ դասվարը չսահմանափակվի միայն առաջադիմության արդյունքների և կարգապահության վիճակի մասին ինֆորմացիա տալով:Կարևոր է ծնողներին ծանոթացնել ընտանեկան դաստիարակության փորձի հետ,նրանց օգնել ավելի լավ իմանալու երեխաների դաստիարակության բարդ հարցերը:

Դպրոցականի տուն կատարվող այցերը: Այս ձևը դպրոցումաշակերտների ծնողների հետ անհատապես աշխատելու ամենատարածված և արդյունավետ ձևն է: Տուն այցելելու դեպքում դասվարը ծանոթանում է իր աշակերտի կյանքի պայմաններին,պատկերացում է կազմում աշակերտի բնավորության,նրա հետաքրքրությունների ու հակումների,մեծերի և փոքրերի հետ նրա փոխհարաբերությունների մասին: Կանոնավոր կերպով աշակերտների տները այցելելով՝դասղեկն աշակերտների վերաբերյալ արժեքավոր նյութ է կուտակում,ուսումնասիրում է երեխաների և ծնողների մեջ ստեղծված փոխհարաբերությունները,պարզում,թե աշակերտնորը տանը ինչպես են անցկացնում իրենց ազատ ժամանակը:Դրա հետ մեկտեղ նա հասնում է այն բանին,որ աշակերտների մեջ բարոյական անհրաժեշտ հատկություններ ձևավորելու գործում ծնողները դառնան դպրոցի մերձավոր օգնականները:

Ծնողների մանկավարժական լուսավորությունը: Ծնողները մանկավարժական գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ժողովների և կոնֆերանսների,զեկուցումների և դասախոսությունների ժամանակ,այլ և օգտվելով երեխաների դաստիարակությանը նվիրված գրականություններից:Վերջին տարիներին ստեղծվել է,այսպես կոչված ծնողական պարտադիր ուսուցումը,որի հիմնական նպատակը կայանում է գիտամեթոդական աշխատանքների անցկացումը և որն իր մեջ ներառում է տարրաբնույթ ձևեր հոգեբանամանկավարժական գիտելիքների հանրամատչելիության տարածումը ծնողների մեջ: Օրինակ, լայն տարածում է ստացել՝<<երիտասարդ մայրերի դպրոցը>>, որտեղ մանկավարժական գիտելիքների հիմքում ընկած են այն կանայք,որոնք կամ ապագա մայրեր են կամ էլ ունեն դպրոցահասակ երեխաներ: Նրանք ուսումնասիրում են երեխաների ֆիզիկական զարգացման,սանիտարահիգիենիկ խնամքի մասին հարցեր, տիրապետում են նրանց խոսքի

զարգացման մեթոդիկայի և այլն: Ժամանակակից դպրոցում, բացի վերը նշված համագործակցության ավանդական ձևերից,կիրառվում են նաև ոչ ավանդական ձևեր՝թեմատիկ խորհրդատվություններ, ծնողական ընթերցումներ,ծնողական երեկոներ,ծնողական մրցույթներ,ծնողական թրեյնինգներ և այլն:Համագործակցության այս ձևորից յուրաքանչյուրն ունի իր նպատակը և որոշակի խնդիրներ,սակայն դրանք բոլորն էլ իրենց հերթին ունեն մեկ ընդհանուր նպատակ՝ավելի լավ ճանաչել սեփական երեխային,ավելի շատ կիրառական գիտելիքներ ձեռք բերել երեխային ճիշտ դաստիարակելու ուղղությամբ,օգնել երեխային ինքնորոշվելու,փորձել հասկանալ նրա հոգեվիճակը,ավելի մոտ գտնվել նրա աշխարհին,հասկանալ նրա ներաշխարհը:Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օրըստօրե զարգացումը մեծապես նպաստում է դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Ներկայումս ծնողները համակարգչի միջոցով կարող են տեղեկատվություն ստանալ իրենց երեխաների առաջադիմության մասին dasaran.am կայքի միջոցով: Սա ևս ժամանակակից դպրոցի համագործակցության ձևերից է և ունի լայն կիառություն: Այսպիսով,դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկկողմանի երկարատև ու նպատակասլաց գործընթաց է,այն ունի մեկ նպատակ՝երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացում և դաստիարակություն,և պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված:

Դպրոցի ուսուցչի և ծնողների հետ համագործակցությունը կարևոր նախադրյալ ու մանկավարժական պայման է՝ապահովելու համար երեխաների դաստիրակությունը և իրականացնելու դպրոցի կրթական նպատակները: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունն արդիական է, քանի որ երեխայի բազմակողմանի դաստիրակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով, որի հիմքում պետք է լինեն վստահության , փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության և հանդուրժողականության սկզբունքները:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության նպատակը երեխայի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, առօրյա կյանքի խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումն է: <<Ես գրեթե չեմ լսել, - գրում է Ա.Ս. Մակարենկոն, - որ ծնողներն ասեն մենք պետք էդաստիրակենք, ինչու՝ է դպրոցը խանգարում: Եվ չեմ էլ լսել, ոինչու ր մանկավարժն ասի, դպրոցը պետք է դաստիրակի, ինչու է ընտանիքի խանգարում: Ընդհակառակը, դպրոցը պահանջում է, որ ծնողները դաստիրակեն երեխաներին, իսկ ծնողներն ահդ բանը սպասում են դպրոցից>>: Այս փոխադարձ պահանջները դեռևս ցավոք դիտվում են հատկապես տարրական

դպրոցում: Սակայն պարզ է, որ այս խնդրի լուծումը պահանջում է կոլեկտիվ ջանքեր որոնք ցանկալի արդյունք կտան այն ժամանակ երբ ընտանիքն իմանա, թե ինչ է անում դպրոցը ,իսկ դպրոցն իմանա, թե ինչ պայմաններում և ինչպես է դաստիրակվում երեխան ընտանիքում: Նոր տնտեսվարման պայմաններում քաղաքական, սոցիալտնտեսական, հասարակական և մշակութային համապարփակ փոփոխություններով պայմանավորված հայ ընտանիքներում առավել նկատելի են դառնում սոցիալ-հոգեբանական տարրաբնույթ ճգնաժամային երևույթները, որոնք էապես խոչընդոտում են դպրոց- ընտանիք համագործակցության կայացմանը: Ներկայումս տարրական դասարաններում որպես ընտանիքի հետ համագործակցության հիմնական միջոցները , կիրառվում են դասարանական ծնողական ժողովները և ծնողների անհատական խոհրդատվության տարբեր ձևերը: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ համագործակցության կայացման առումով էական նշանակություն ունի դասվարների հաղորդակցման ոճն իրենց աշակերտների ծնողների հետ, դասվարի մենախոսությունը պետք է իր տեղը զիջի ծնողների հետ երկխոսությունը առկա խնդիրների շուրջ,անկեղծ մտահոգությանը, որի ընթացքում երկու կողմերը միմյանց հետ փոխանակում են կարծիքներ, առաջարկներ, համատեղ որոնում երեխաների դաստիրակության արդյունավետ ուղիներ:

Ծնողների խորհրդատվության ժամանակակից դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամեմաարդիական և պահանջված եղանակն է: Ծնողների մեծամասնությունն ինքնակրթությանը համար ժամանակ չի ունենում և սովորաբար խորհրդատվության համար դիմում է հենց դպրոցին: Խորհրդակցության հիմնական նպատակը շնողների ձգտումն է ՝ ավելի խորը և օբյեկտիվ պատկերացում ունենալ իր երեխայի առաջադիմության, վառքագծի հետ կապված խնդիրների մասին, լսելու պրոֆեսոիանալ մանկավարժի դիտարկումներն ու խորհուրդները և ըստ այդմ, առավել որոշակիացնելու կամ շտկելու, վերակազմակրպելու սեփական դաստիրակչական հնարները:

Սակայն կան այլ միջոցներ ևս, որոնք այսօր հազվադեպ են գործադրվում: Դրանցից են՝

- մանկավարժական փորձի փոխանակման համաժողովները,
- ծնողների հետ հարց ու պատասխանի երեկոները, դասախոսություններն ու զրույցները,
- դպրոցական կոլեկտիվի և ընտանիքի անդամների հանդիպումները
- կլոր սեղան-քննարկումներ
- բանավեճերը՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ:

Երեխայի դաստիրակության հարցում ծնողների և դասվարների ցանկությունները համընկնում են և նրանք գործադրում են որոշակի ջանքեր՝ծնող-դասվար համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու համար:

Սակայն դպրոցի և ընտանիքի համագործակցության առավել արյունավետ կլինի եթե.

- ծնողները պարբերաբար և անմիջականորեն շփվեն դասվարի հետ, այլ ոչ թե՝ ժողովից ժողով և միայն երեխայի օրագրում արված նշումներից տեղեկանան նրա ուսումնադաստիրակչական առօրյայի մասին,
- դասվարը դասարանում առկա բոլոր դժվարությունների մասին տեղեկացնի ծնողներին, որպեսզի նրանք էլ այդ խնդիրներին տանը հատուկ ուշագրություն դարձեն,
- ծնողները երեխայի ցանկացած դաստիրակչական խնդրի լուծումն ընտրեն դասվարի խորհորդները լսելուց հետո, , որպեսզի դասվարն իր հերթին այդ խնդրի լուծմամբ զբաղվի ուսուցման գործընթացում,
- դասվարը հաղորդակցվի ծնողների հետ, այցելի նրանվ տուն ՝ ծանոթանալու երեխայի ընտանեկան պայմաններին, ընտանիքում տիրող մթնոլորտին և միջանձնային փոխհարաբերություններին
- դասվարը ծնողների հետ անհատական զրույցների ժամանակ բացի երեխաների վարքի կամ առաջադիմության մասին հաշվետվությունից ,նրանց հաղորդի հոգեբանական և մանկավարժական բնույթի խորհուրդները:

Անշուշտ, երեխայի դաստիրակության գործում ընտանիքն ու դպրոցը չեն կարող փոխարինել իրար, սակայն շատ կարևոր է ստեղծել վստահելի, գործընկերային,

բովանդակալից ու հուզականորեն հագեցած հարաբերություններ միմյանց հետ՝ համատեղ ու անընդհատ մանկավարժական ներգործությունների միջոցով ապահովելով երեխայի լիարժեք ձևավորումը:

Այսպիսով՝ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկողմանի ու նպատակասլաց գործընթաց է, այն ունի ընդհանուր նպատակ և պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված: Այդ կապի բարելավման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել ծնողների կարիքները և առաջարկությունները, աշակերտների կրթական պահանջմունքները՝ ստեղծելով կրթադաստիարակչական գործընթացի համար արդիական պայմաններ:

## Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ և դրանց ազդեցությունը լսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման գործընթացում

Երեխայի լսողության խնդիրները հաղթահարելու համար, երեխայի ծնողները, ընտանիքը կարիք ունեն մասնագետների խորհրդատվության, աջակցության: Աշխարհի տարբեր երկրներում այս հարցում տարբեր մոտեցումներ են գործում, սակայն փորձը ցույց է տալիս, որ մասնագետների խորհրդատվության, հատուկ սեմինարի անցկացումը անհրաժեշտ է երեխայի զարգացման, կրթության և հասարակության մեջ նրան ներգրավելու համար: Սակայն, պետք է արձանագրել, որ այստեղ գլխավոր դերը պատկանում է ծնողին, քանզի բոլոր դեպքերում մեթոդների կատարողը, իրականացնողը նա է: Այսպիսով, ԱՄՆ-ում ծնողը պարտավոր է հերթականությամբ հաճախել՝ առողջապահության համապատասխան մասնագետների խորհրատվության (մանկաբույժ, ընտանեկան բժիշկ), աուդիոլոգի, օտորինոլարինգոլոգի, ծառայությունների կոորդինացնողի, խոսքի և լեզվի պաթոլոգի, չլսող կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների ուսուցչի, դասարանի սովորական ուսուցչի խորհրդատվությունների: Այս ամբողջ շղթայի մեջ ծնողն անցնում է դժվար մի ուղի, սակայն չհանձնվելու և միայն յուրացրած բոլոր մեթոդնորի կիրառումը կարող է հանգեցնել երեխայի ճիշտ զարգացմանը: Այս առումով, անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր է Children's Hearing Institute-ի գործունեությունը ԱՄՆ-ում: Այս կառույցը կազմակերպում է լսողության խնդիրներ ունեցող երեխաների ծնողների սեմինարներ, որոնք նպաստում են ծնողների իրազեկությանը: Համաձայն կառույցի գաղափարախոսության՝ անկախ այն բանից թե նոր ախտորոշված երեխայի ծնող ես, թե արդեն բավական փորձ ունես, անչափ կարևոր է մասնակցել այսպիսի սեմինարներին և կիսվել սեփական փորձով: Այսպիսով, Children's Hearing Institute-ը կազմակերպում է Ծնողների Միավորման Ծրագիր նպաստելու ինֆորմացիայի տիրապետմանը, միմիյանց հետ փորձի փոխանակմանը, հաղորդակցմանը, և որն ամենակարևորն է՝ հոգեպես միմյանց աջակցելուն (Professionals in Hearing Loss, 2019)

Հատկանշական է, որ Ռուսաստանի Դաշնությունում կրթության մոդեռնիզացիայի և

զարգացման համար կարևոր պայման է հանդիսանում ռիսկային խմբի երեխաների ընտանիքներին որակյալ կրթությամբ ապահովելը, հոգեբանական և մանկավարժական օժանդակություն ցուցաբերելը, նրանց համար դաստիրակչական-կրթական հարթակի տրամադրումը, կրթական հաստատության և ծնողների միջև համագործակցական կապի ստեղծումը: Անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ ՌԴ-ում անցկացվող ծնողական դպրոցները իրենց հսկայական ազդեցությունն են ունենում երեխայի լեզվական հմտությունների, վաղ կարդալու ունակությունների, ինչպես նաև երեխայի էմոցիոնալ դաշտի և սոցիալականացման վրա (Молчанова, Л.Н., Фомина, А.В, Чеканова, А.В.,, 2018):

Գոլովչիցը նշում է, որ նախադպրոցական հաստատություններում բացի ծնողների հետ անհատական աշխատանքից կիրառվում են նաև խմբային ձևի աշխատանքներ: Դրանց մեջ են մտնում ընդհանուր և խմբային ծնողական ժողովները, թեմատիկ ժողովները, «կլոր սեղանների» կազմակերպում, խմբային խորհրդակցություններ, բաց դռների օրեր, մանկական աշխատանքների ցուցահանդեսներ, մանկապարտեզի միջոցառումների մեջ մասնակցություններ և այլն: Խմբային ծնողական ժողովներին քննարկում են հարցեր, որոնք արդիական են տվյալ խմբի երեխաների ծնողների համար: Սուրդոմանկավարժը և դաստիարակը անոթացնում են ծնողներին երեխաների դաստիարակման և ուսուցման տարատեսակ ուղղությունների աշխատանքների պարունակությանը և խնդիրներին՝ կատարելով դա ծնողների համար հասանելի ձևով: Ծնողների հետ աշխատանքի տեսակներից մեկը հանդիսանում է նաև բաց դռների օրերը, որոնց ընթացքում ծնողները կարող են հաճախել խմբային և անհատական պարապմունքների ավագ խմբերում, հետևել երեխաների շփմանը և զբոսանքների ժամանակ պարապմունքներին, հանդիպել և զրույցել մանկավարժների, ավագ դաստիարակի հետ: Բաց պարապմունքներ կրտսեր խմբերում կարող են կազմակերպվել այնպես, որպեսզի երեխաները չտեսնեն ծնողներին, այսինքն ծնողները կարող են հետևել երեխաներին հարևան սենյակից: Դասընթացները ծնողների համար ենթադրում են ծնողների աստիճանաբար ծանոթացում սուրդոհոգեբանության և սուրդոմանկավարժության ընդհանուր հարցերի հետ: «Կլոր սեղանների» թեմաները հաճախ ներկայացնում են լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների ուսուցման և դաստիարակման որոշակի խնդիրներ. լսողության պրոթեզավորման հարցեր, ձայնը բարձրացնող սարքավորման ճիշտ կիրառում, ընտանիքում լսողության զարգացման վերաբերյալ աշխատանք և այլն: Ընդհանուր կամ խմբային թեմատիկ

խորհրդատվությունների անցկացման ժամանակ ծնողները նախորոք կարող են կազմել հարցեր գրավոր տեսքով: Նրանց կուտակման արդյունքում կազմակերպվում են թեմատիկ ժողովներ այդ հարցերի վերաբերյալ :

Ընդհանուր խորհրդատվությունների ժամանակ քննարկվում են ծնողներին հետաքրքող հարցեր, որոնք վերաբերվում են երեխաների առողջությանը, լսողության օրգանների հիվանդությունների բուժմանը, լսողության սարքերի ճիշտ կիրառման և ընտրության խնդիրներին և բազմաթիվ այլ խնդիրներ (Головчиц Л. , 2001):

Ծնողների հավաքածուն դպրոցի եւ ընտանիքի միջեւ հաղորդակցության հիմնական ձեւն է: Ծնողական հանդիպումների անցկացման խնդիրն է ծնողներին կրթել լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման եւ բարձրացման որոշ կարեւորագույն թեմաներով: Նրանք պետք է անցկացվեն տարին առնվազն 4 անգամ եւ ունենան կոնկրետ թեմա:

Հատկանշական է հատկապես Լավալ Լ.-ի, Կարիա Մ.-ի, Բաթարս Ս.-ի, Լարսեն Ջ.-ի, Մուլվաֆու Վ.-ի աշխատությունում կատարված հետազոտությունը և ներկայացված ծնողական դասընթացների օրինակները (Lawal, .L, Karia, M., Buttars, C., Larsen, J., Mulwafu, W, .et al, 2016): Զարգացող երկրներում լսողության խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ծնողների համար իսկական փորձություն է դառնում դպրոցական տարիքը, երբ նրանք սկսում են սովելու գործընթացը: Օրինակ Հարավային Աֆրիկայի Հանրապետության Կրթության նախարարությունը հավաստիացնում է, որ լսողության խնդիրներ ունեցող երեխաների ծնողների՝ համապատասխան ծրագրերի մեջ սահմանափակ ներգրավվածությունը կամ ընդհանրապես չներգրավվելը դառնում է իրական խոչընդոտ այսպիսի երեխային օգնելու, աջակցելու և նրա զարգացման գործում: Համաձայն Քենիայի Կրթության նախարարության զեկույցի, ծնողները չեն ստանում անհրաժեշտ ինֆորմացիա, ինչի արդյունքում երեխան զրկվում է իր համար մատչելի լեզվից: Սակայն, այնուամենայնիվ, Քենիայում որոշ դպրոցներ ունեն տարբեր բաժանված խմբեր(աուդոլոգ, խոսքի թերապևտ և սովորեցնողներ), որոնք աշխատում են ուսուցիչների հետ, և որտեղ լսողության խնդիրներ ունեցող սովորողները ներառական ֆունկցիա ունեն. նրանք կարող են շփվել և գործ ունենալ լսողների շրջապատի հետ: Իսկ սովորեցնողները օգնում են լսողության խնդիրներ ունեցող սովորողներին հաստատվել այդ միջավայրում և մեծացնել նրանց՝ բանավոր հաղորդակցվելու ունակությունները:

Հետաքրքիր է հատկապես հեղինակների անդրադարձը Քենիայում անցկացված լսողության խնդիրներ ունեցող երեխաների ծնողների դասընթացներին: Բանավոր խոսքի պաթոլոգի, աուդոլոգի և լսողության խնամքի կոորդինատորների մասնակցությամբ երեք դասընթաց է ուսումնասիրվել, որտեղ ծնողները տեղեկություն են ստանում ընդհանրապես լսողության խնդրի, լսողության ապարատների մասին և թե ինչպես օգտագործել բանավոր հաղորդակցության դասերը տանը: Ծնողները ստանում են համապատասխան նյութեր, ինչը նրանք կարող են օգտագործել իրենց երեխաների հետ տանը աշխատելու համար: Հետազոտությունները ցույց տվեցին այս դասընթացների արդյունքները , որոնց համաձայն դրական տեղաշարժ է գրանցվել լսողության խնդիրներ ունեցող երեխաների բանավոր խոսքում: Հեղինակներ համոզմամբ ԼԽՈՒԵ-ի բանավոր խոսքով հաղորդակցման ունակությունը կնպաստի նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի բարելավմանը և հասարակության լիիրավ անդամ դառնալուն:

Ջարգան Ջոշի «Կրթենք ծնողներին լսողության խնդիրներ ունեցող երեխաներին կրթելու համար» հոդվածը անդրադառնում է ծնողի ստացած ինֆորմացիայի կարևորությանը, քանզի «լավագույն դպրոցը» երեխաների համար տունն է (Jagran, 2010): Հեղինակը ներկայացնում է Հնդկաստանում գոյություն ունեցող անվճար ծրագրերն ու դասընթացները, որոնք նախատեսված են լսողության խնդիրներ ուենցող երեխաների ծնողների համար: Այս ծրագրերը գործում են Հնդկաստանի Սոցիալական Արդարության և Հզորացման Նախարարության հովանու ներքո: Այս ծրագրերից մեկը ծնողների և խնամողների համապատասխանության կուրսն է: Կուրսը ուղղված է օգնելու ծնողնին հաղթահարելու երեխայի լեզվական, նրա բառապաշարը զարգացնելու դժվարությունները: Տնային առաջադրանքներ են տրվում ծնողներին, որտեղ երեխայի լեզուն բացելու մեթոդներն են ներկայացվում: Նրանց սովորեցնում են համապատասխան միջավայր ստեղծել երեխայի ուսուցման համար, քանի որ 0-5 տարեկան ընկած ժամանակահատվածը կարևորագույնն է լեզվի զարգացման համար:

Մեկ այլ ծրագիր է ծնողի նորածնային ծրագիրը: Այս կուրսերին ծնողը մասնակցում է իր փոքրիկի հետ: Ծնողները սովորում են, թե ինչպես մանրազնին հետևել իրենց՝ լսողության խնդիր ունեցող փոքրիկի զարգացմանը: Այս ամենը նպաստում է հաղթահարելու այն խոչընդոտները, որ փոքրիկը կարող է հանդիպել բարձրագույն կրթություն ստանալու իր ուղու ընթացքում: Հաջորդը կապի պահպանման դասընթացներն

են՝ կազմակերպված ծնողների համար: Այս կուրսի ընթացքում ծնողներն ու ուսուցչները աշխատում են միմյանց հետ՝ կրթելու լսողության խնդիրներ ունեցող երեխաներին: Ծրագիրը ձևավորվում է ՝ ելնելով երեխաներին տարիքից: Այս դասընթացները տեղի են ունենում պարբերաբար Հնդկաստանի հատուկ դպրոցներում և հետևյալ դրույթներն են կարևորվում այս ծրագրում.

- հատուկ ուսուցիչների օգնությամբ է կազմվում երեխայի կրթական ծրագիրը
- Համապատասխան կրթական ծրագրերը իրականացվում են թե՛ սովորական դպրոցներում, թե՛ հատուկ դպրոցներում, ինչը կախված է երեխայի կարողություններինց և հաջողության հասնելու հավանականությունից
- Ծնողները սովորում են խթանել լսելու, բարձր կարդալու և կարդալու կարողությունները:
- Դպրոցի ուսուցիչներ հետ կանոնավոր հանդիպումների միջոցով ծնողները հետևում են դասարանի կրթական մեթոդներին: Ծնողները պետք է սովորեն ուսուցիչների ներկայացրած մեթոդները, որպեսզի նույն մեթոդները կիրառվեն տանը:
- Ծնողները ազատ են քննարկելու իրենց մտավախությունները և կասկածները ուսուցիչների հետ:
- Ծնողներին խորհուրդ է տրվում ավելի աջակցող լինեն երեխաների հաջողության կամ ձախողման դեպքում՝ ոգևորելով նրան : Ծնողները պետք է օգնեն երեխաներին արտահայտելու իրենց միտքը ազատորեն, որպեսզի նրանք էլ ազատորեն հաղորդակցվեն ընտանիքում
- Այսպիսի ծրագրի հիմնական նպատակն է, որ ծնողները դառնան հավասարազոր մասնակիցներ իրենց երեխաների կրթության հարցում

Համաձայն Կոզանովայի՝ չլսողների եւ լսողության խանգարված երեխաների ծնողների հետ աշխատանքների բովանդակությունը պետք է ներառի մի շարք ոլորտներ (Կոզանովա, 2013).

- Առողջության ամրապնդում, երեխաների ֆիզիկական զարգացման բարելավում, լսողության խանգարում ունեցող անբավարարությունների հաղթահարում;

- Լսողության խանգարումներ ունեցող աշակերտների բարոյական կրթություն՝ նրանց ծանոթացնելով մարդկային արժեքներին, մարդկանց միջեւ հաղորդակցության նորմերին, մարդկային գործողությունների գնահատման չափանիշներին,
- Ընտանիքում լսողության խանգարում ունեցող երեխայի մնալու պայմանների ուսումնասիրություն, ընտանեկան հարաբերությունների հոգեբանական եւ մանկավարժական ուղղում,
- Ծնողներին ներգրավել լսողության խանգարումներ ունեցող երեխաների համար գիշերօթիկ հաստատության հետ համագործակցելու, ուսուցիչների եւ երեխաների հետ հաղորդակցումը համատեղ գործունեության համատեքստում:

Ծնողների հետ աշխատանքի կազմակերպման ձեւերը բավական բազմազան են.

- Կոլեկտիվ `դպրոցական եւ դասարանային հանդիպումներ, դասախոսություններ եւ սեմինարներ ծնողների, կոնֆերանսների, բաց դռների համար;
- Խումբ `ծնողների հետ աշխատելու կոմիտեի կողմից՝ ներգրավելով ծնողներին կազմակերպչական, մշակութային, տնտեսական, կրթական հարցերը լուծելու համար,
- Անհատական զրույցներ, ընտանեկան այցելություններ, խորհրդատվություն, նամակագրություն:

Համահեղինակներ Էնվիրոնի, Դուստիի, Մովայալիի, Աբեդի-Շափուրաբադիի իրականացված հետազոտությունը ուսումնասիրում է լսողության խնդիրներ ունեցող երեխաների մայրերի համար նախատեսված կրթական ծրագրերի արդյունավետությունը և այդ ծրագրերի՝ նրանց մտավոր առողջության վրա ունեցած ազդեցությունը (Environ J., Marzieh Dousti Bi., Guita Movallali M.A , Soraya Abedi-Shapourabadi, 2015): Աշխատությունում ներկայացված են ընտանիքի անդամների համար նախատեսված ծրագրերը, որոնք կարևոր և առաջնային նշանակություն ունեն այն երեխաների համար, ովքեր հատուկ կարիքներ ունեն: Այս առումով, ընտանիքի անդամերի համար նախատեսված կրթական ծրագրերը հաղուկ կարևորություն ունեն: Այստեղ ոչ միայն համապատասխան հմտություններ են սովորեցնում, այլև պայմաններ են ստեղծում ծնողների շփման և ընդհանուր խնդիրների շուրջ նրանց միավորման համար: Ծնողները իրենց փորձի

փոխանակման արդյունքում օգնում են միմյանց՝ ընդունելու երեխայի խնդիրը և փորձելու լուծել այն: Ճիշտ կրթական ծրագրեր իրագործելու դեպքում, հնարավոր է առաջացնել դրական տրամադրվածություն և վերաբերմունք ծնողների մոտ: Խմբային գործելաոճի շնորհիվ, ծնողներն իրենք կարող են դրական ազդեցություն ունենալ սթրեսային տրամադրության նվազեցման և մյուս ծնողների վրա սոցիալական աջակցության առումով: Ինչպես նաև երեխայի հետ շփման ճիշտ կանոններին տիրապետելով՝ ծնողները կարող են խուսափել կամ հաղթահարել այն դժվարությունները, որոնք առաջանում են լսողության խնդիրներ ունեցող երեխայի և ծնոնղերի միջև, որոնք էլ ազդում են ծնողների հոգեկան աշխարհի վրա:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, հեղինակները պարզել է, որ ծնողական դրական դպրոցի հաճախելը բավականին նշմարելի ազդեցություն է ունեցել ծնողի հոգեկան առողջության վրա՝ հանգեցնելով մեկուսացման, հիասթափության կրճատմանը, միջանձնային հարաբերություններում դժվարությունների և դեպրեսիայի աստիճանի զգալի նվազմանը: Այսպիսով, ծնողները սովորում են տիրապետել կատարյալ մեթոդներին իրենց երեխաի հետ շփվելու համար, ինչն էլ նպաստում է, որպեսզի գրեթե վերանան երեխայի ունեցած դժվարությունները և երեխա-ծնող հարաբերություններում առկա դժվարությունները: Ծնողի ինֆորմացիայի տիրապեելը, գիտակից աստիճանի բարձրացումը, իրենց հերթին, կրճատում են մակրիկների անհանգստությունը, հուսահատությունը, և միաժամանակ վերացնում սխալ և անարդյունավետ կարծիքը և մոտեցումը լսողության խնդիրների նկատմամաբ:

Միաժամանակ, հեղինակների ուսումնասիրությունները ապացուցում են, որ լսողության խնդիրներ ունեցող երեխաների ծնողների մոտ առկա հոգեբանական խնդիրները զգալի չափով կրճատվում են ծնողական դպրոցների հաճախելու շնորհիվ: Դեպրեսիան, ժխտելու հոգեբանությունը կտրուկ նվազում է հատկապես, երբ ծնողները հաղորդակցվում են միևնույն խնդրի առջև կանգնած մյուս ծնողների հետ: Անցկացված հարցումների ընթացքում ծնողները պնդում էին, որ այլ ծնողների հետ շփումները անչափ կարևոր են, ինֆորմատիվ են և խոստումնալից: Ինֆորմացիայի մեծ մասը, որը չի տրամադրվում փորձագետի կողմից, ծնողները ստանում են այլ ծնողների հետ հաղորդակցվելու շնորհիվ:

## Եզրակացություն

Աշխատանքում կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ ծնողական դպրոցները առանցքային նշանակություն ունեն լսողության խանգարում ունեցող երեխաների ճանաչողության, հոգևոր և մտավոր զարգացման և նրա համընդհանուր ներառման գործընթացի համար:

Հատուկ գիտամեթոդաբանական գրականության ուսումնասիրությունը թույլ տվեց մեզ գալ հետևյալ եզրահանգումների.

- Աճող սերնդի դաստիրակության և սոցիալականացման գործում մեծ ու անփոխարինելի է ընտանիքի դերը: Ընտանիքն իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ՝ վերարտադրողական, տնտեսական, դաստիարակչական, սոցիալականացման, հաղորդակցման, ինչպես նաև ժամանակի կազմակերպման: Ընտանիքը անհատին ձևավորման սոցիալականացնող առաջնային միջավայրն է:
- Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքում, և՛ դպրոցում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն այդ տեսակետից անփոխարինել է դպրոց-ընտանիք համագործակցությանկազմակերպումը:
  - Ծնող-ուսուցիչ համագործակցությունը ծանոթացնում է ծնողներին լսողության խանգարում ունեցող երեխաների հետ աշխատելու ճիշտ և արդյունավետ մեթոդներին
  - Ծնող-ուսուցիչ համագործակցության միջոցով լսողության խանգարումներ ունեցող երեխաները կարողանում են հեշտ հաղթահարել ընդհանուր ներառման խնդիրները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Խոջոյան Լ. ընտանիք-դպրոց համագործակցություն, նախաշավիղ, 2017, N1,էջ 56-61,

2. Սարոյան Վ. մեծահասակների հետ համագործակցությունը որպես ապագա դպրցականի անձի ձևավորման պայման, նախաշավիղ, N 2, 2010 , էջ26-32

3. Ջանիկյան Ս. դպրոցի- ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների գործընթացում, նախաշավիղ, N 7 , 2010 , էջ 46-51

4. Կոզանովա, Տ. Ընտանիքի դերը առողջության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալիզացիայի գործում// «Գիտության եւ կրթության արդի հիմնախնդիրները» № 4// Երևան, 2013.

5. Ткачева, В. В., Архипова, Е. Ф., Бутко, Г. А. и др. Психолого-педагогическое сопровождение семьи ребенка с ограниченными возможностями здоровья// Москва: учебник для студ. учреждений высш. образования// Издательский центр «Академия». 2014,- ст. 272